

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը

ք.Հրազդան

19.12.2017թ. ժամը 11.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Կ.Մարզարյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Հ.Հայրապետյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Մ.Մանասյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Գ.Հայրապետյան- ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
- Ս.Եղիազարյան- ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
- Վ.Սեպոյան-ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ /բացակայում էին Գետամեջ, Աղավնաձոր, Նորգյուղ համայնքների ղեկավարները/

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյան/

2. Մարզի համայնքներում 2017թ. ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ. Ալեքսանյան/

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի զեկուցումը մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի ղեկուցումը մարզի համայնքներում 2017թ. ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

-Առանձնահատուկ ուշադրության արժանացնել նոր մշակաբույսերի մշակության բազմաբնույթ տեխնոլոգիաների ներդրումային ծրագրերին:

-Ընթացիկ աշխատանքներում առաջնորդվել՝ գերակա սկզբունք համարելով խմելու ջրի խնդիրների լուծման, կեղտաջրերի հեռացման աշխատանքների բարելավման, աղբահանության աշխատանքների կատարելագործման և շրջակա միջավայրի մաքրության հիմնախնդիրները:

Հանձնարարվեց՝

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյանին՝


-Վերահսկել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը բոլոր հարկատեսակների գծով:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանին՝

-04.09.17թ. ՀՀ Կոտայքի մարզպետի N172-Ա որոշմամբ ստեղծված հանձնախմբի գործունեության հիմնական ուղղություն համարել աշակցությունը մինչև 25.12.2017թ. համայնքային բյուջեները կազմելու աշխատանքներին:

Համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝

-Զբաղվել մարզում առկա հետաքրքիր ներդրումային ծրագրերի ուսումնասիրությամբ:

 Լ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ